



Համազգային Լրատու

Արեւմտեան Ամերիկայի Երջանային Վարչութիւն
Hamazkayin Armenian Educational & Cultural Society
USA Western Region . 2017-2018 Brief Bulletin



Համազգային ArtLinks Երիտասարդական Ցանցի 2018ի Հաւաքը Յուլիսին -

Համազգային Մշակութային Միութիւնը միշտ իր գրկին մէջ փայփայած է հայ մանուկն ու հայ երիտասարդը՝ անոնց սրտին մէջ ցանելով հայապահպանման եւ հայակերտման սերմեր: Սփիւռքի տարածքին, Համազգայինը իբրեւ փարոս, հայ երիտասարդը կ'առաջնորդէ դէպի հայկական ինքնութեան արժեւորման ուղիները՝ զանոնք հեռու պահելով օտարամտութեան դարձդարձիկ ճանապարհներէն: Այս փառահեղ կազմակերպութեան տարեկան

ծրագիրներու շարքին մաս կը կազմէ Համազգայինի Արեւմտեան եւ Արեւելեան Ամերիկաներու ու Գանատայի Երջանային վարչութիւններու նախաձեռնած Համազգային Երիտասարդական Ցանցը՝ Hamazkayin ArtLinks, որ դարձած է երիտասարդներուն հոգեհարազատ ծրագիր մը:

Համազգային Հայ Կրթական Եւ Մշակութային Միութեան Ը. Պատգամաւորական Ժողովը գումարուեցաւ Երեւանի «Անի» հիւրանոցին մէջ, 19, 20 եւ 21 Մայիս 2018ին:



Կեցցէ՛ Համազգայինի «Մայաթ Նովա» Երգչախումբը Հայաստանի Ա. Հանրապետութեան դարադարձին նուիրուած Համազգայինի «Մայաթ Նովա» երգչախումբի համերգը տեղի ունեցաւ Մայիս 5, 2018-ին:



ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ՄԱԿԻ ՊԱՊԻԿԵԱՆԻ ՀԵՏ

«...Անոնք Նպատակ Դարձուցած Են Զօրավիզ Կանգնիլ Հայ Գրողին Եւ Բանաստեղծին».....
 5 Ապրիլ 2018ին, աւելի քան 400 հանդիսատեսներ ներկայ գտնուեցան Խորէն

Արամունիի ի պատիւ տեղի ունեցած յոբելենական հանդիսութեան, որ կազմակերպուած էր Համազգայինի Շրջանային վարչութեան Գրական Միաւորի եւ Իրանահայ միութեան համագործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Լոս Անճելըսի մէջ Հայաստանի հիւպատոսարանի: Այս առիթով, վարչութեան գործավարը հարցազրոյց մը ունեցաւ միաւորին մօտ Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Մակի Պապիկեանի հետ:

Համազգային «Բագին» Գրական Եռամսեան Կը Ներկայացուի Կլենտելի Հայութեան

«Բագին» գրական եռամսեայ հանդէսը մօտաւորապէս տարիէ մը ի վեր կը հրատարակուի նոր դիմագիծով եւ Սոնիա Քիլէճեան-Աճէմեանի խմբագրութեամբ:




Գումարուեցաւ Համազգայինի Հիւսիսային Ամերիկայի 4րդ Եռակողմանի Ժողովը

Մարտ 17-18, 2018ի շաբաթավերջին, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նիւ Ճրքի շրջանին մէջ տեղի ունեցաւ Համազգայինի ԱՄՆ Արեւելեան եւ Արեւմտեան, ինչպէս նաեւ Գանատայի Շրջանային վարչութիւններու չորրորդ տարեկան ժողովը:



Համազգայինի «Անի» Պարախումբի 43րդ Տարեդարձի Շքեղ Եւ Ոգեւորիչ Համոյթը

43 տարիէ աւելի, Համազգայինի «Անի» պարախումբը, ղեկավարութեամբ Սիւզի Բարսեղեան-Դարբինեանի եւ Եղիա Հաշոյեանի, կը գոյատեւէ, ու նպատակաւալաց եւ անշեղ հայրենասիրական ոգիով կը ծաւալէ իր գործունէութեան դաշտը պարարունստի բնակավայրին մէջ:



Տաղանդաւոր Զութակահար Նունէ Մելիքի Ելոյթը՝ Համազգայինի Երաժշտական Միաւորի Կազմակերպութեամբ

Մեծ հաճոյք է տեսնել հայ երիտասարդ արուեստագէտի մը վերելքը դէպի միջազգային բեմեր: Այդ հաճոյքը կը բազմապատկուի, երբ ան սնած է հայկական ակունքներէն, կը գիտակցի անոնց արժէքին ու գեղեցկութեան եւ զանոնք իր հետ կը բարձրացնէ արժանավայել բեմեր:

Համազգայինի Եւ

Մարդարապատ Գրախանութի Կազմակերպութեամբ՝ «Օտո Մըն Եմ Ես» Եւ «Բողբոջող Անմոռուկներ» Գիրքերու Ներկայացում Վերջերս, Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութիւնս, գեղեցիկ գաղափարը յղացաւ Մարդարապատ գրախանութին հետ համագործակցաբար՝ գրական հանդիպումներ կազմակերպելու: Առաջինը տեղի ունեցաւ Հոկտեմբերին, «Մարդարապատ»ի մէջ, ներկայութեամբ Համազգայինի «Գրական միաւոր»ի խումբին եւ գաղութի գրասէրներուն:





**Համազգայինի Նուիրահաւարի
Ձեռնարկը՝ Ճոխ Գեղարուեստական
Յայտագիրով**

Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի
Շրջանային վարչութիւնը կը գտնուի
շրջանիս մէջ իր հիմնադրութեան
50ամեակի սեմին: Այս առթիւ, անիկա
ձեռնարկած է զանազան երեկոյթներու,
որոնցմէ առաջինը տեղի ունեցաւ Շաբաթ,
19 Օգոստոս, 2017ին, երեկոյեան ժամը
7:30էն սկսեալ, Keush Ranch-ին մէջ:

**Համազգայինի Աւանդոյթներու Միաւորի
Աշխատանքներէն՝ Կար Ու Ձեռ**

Տասնեակ մը՝ 10-12 տարեկան պարմանուիներ,
հաւաքուած նոյն սրահին մէջ՝ կը լսէին իրենց
տաղանդաւոր ուսուցչուհիին բացատրութիւններն ու
ցուցմունքները: Ո՞վ ըսաւ որ նոր սերունդը կարել ու
ձեւագիտութիւն չի սիրեր, կամ՝ համբերութիւնը չունի
անոր:



**Երեւանի Մէջ Կ'ընթանայ Համազգայինի Ամենամեայ
Ուսանողական Հաւաքը**

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան ամենամեայ ուսանողական
հաւաքը Հայաստանի եւ Արցախի մէջ Համազգայինի աւանդական ծրագիրներէն է
(Ֆորում): Լիբանանի խումբը հասաւ Երեւան եւ միացաւ 9 երկիրներէ եկած միւս
մասնակիցներուն: Հաւաքին բացումը կատարուեցաւ Յուլիս 8ին եւ շարունակուեցաւ
մինչեւ Յուլիս 21, Հայաստանի եւ Արցախի մէջ:



8-21 Յուլիս 2017





Համազգայինի Թատերական Միաւորի «Արուեստի Երեկոն»

Յունիս 3, 2017: Վայրը՝ Keush Ranch-ն էր այս անգամ: Յայտնագործում մը, որուն շնորհիւ երեկոյին յաջողութիւնը գրեթէ երաշխաւորուած էր:

Համազգայինի Կողմէ CID Պարի Միջազգային Խորհուրդի Անդամակցութիւն Եւ Կանոնագրութեան Մշակում

CID-ը (Conseil de la Danse-International Dance Council Պարի միջազգային խորհուրդ) աշխարհի բոլոր երկիրներուն մէջ պարի-պարարուեստի բոլոր սեռերու բարձրագոյն պաշտօնական կազմակերպութիւնն է: Անիկա ճանչցուած է UNESCO-ի, կառավարութիւններու, միջազգային կազմակերպութիւններու եւ միջազգային զանազան կառոյցներու կողմէ: CID-ը համաշխարհային ոչ-կառավարական կազմակերպութիւն մըն է՝ NGO, որ հիմնուեցաւ 1973ին, UNESCO հաստատութեան շէնքին մէջ, Փարիզ, ուր կը գտնուի իր պաշտօնական նստավայրը:



Համազգայինի Միջ-դպրոցական Արուեստի Մրցոյթ

Համազգայինի Հովիտի «Պարոյր Սեւակ» մասնաճիւղը 2017-ին կազմակերպած էր միջդպրոցական մրցոյթ մը՝ արուեստի բոլոր բնագաւառներուն մէջ, միջնակարգի 5րդ, 6րդ եւ 7րդ դասարաններու աշակերտութեան համար: 2018-ին մրցոյթը կազմակերպեց եւ որդեգրեց իբրեւ

տարեկան աւանդոյթ եւ իբրեւ Շրջանային վարչութեան գործունէութիւն:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ Փաստինայի Շահան Շահնուր

Այս Շաբաթ
Մեր Ծրագրերը

Փետրուար 13, 2018
Երեքշաբթի, Ժամը 7-9
Հարկերն զրականության ծածօթանայու հաւար

Փետրուար 14, 2018
Ամեն Զորեքշաբթի,
Ժամը 5:30ն սկսեալ
ԼՈՌԻ Մանկապատանեկան Պարախումբի վարձեր

Փետրուար 16, 2018
Ուրբաթ, Ժամը 7:30ն սկսեալ
Անտական Մտերմիկ հասոց եւ զրոյց
բորը Համազգայինի անդամներն եւ
յնկերներն. Potluck & bring your own drink





Համազգայինի Փաստինայի «Շահան Շահնուր» Մասնաճիւղի 2018ի Տարեկան Ծրագիր

Համազգայինի Փաստինայի «Շահան Շահնուր» մասնաճիւղի նորընտիր վարչութիւնը նոր եռանդով ու խանդավառութեամբ լծուած է Փաստինայի ու շրջակայ քաղաքներու մշակութային կեանքի կազմակերպման աշխատանքներուն, կազմակերպելով այլազան տեսակի ձեռնարկներ, երեխաներու պարախումբ, մրցոյթներ, եւ այլն:

Համազգայինի Երջանային Ժողովը Նոր Ղեկավար Մարմին Ընտրեց

Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի շրջանը գումարեց իր 21րդ Երջանային ժողովը 26 Մարտ 2017ին, Կլենտէյլի իր նստավայրին մէջ:



Համազգայինի Թատերական Միաւորին Կազմակերպած Հայկական Վարժարաններու Շարադրական Մրցումը


Համազգայինի Թատերական միաւորը քանի մը ամիս առաջ հայ աշակերտներուն ներկայացուց «Ծաղկամանին Գաղտնիքը» մանկապատանեկան թատերախաղը: Նշենք, որ Թատերական միաւորին նպատակներէն է թատերական արուեստը աշխուժացնել եւ

անոր ընդմէջէն հայկական մշակոյթն ու յատկապէս լեզուն տարածել հայ երիտասարդներուն եւ երեխաներուն մէջ: Ներկայացման առընթեր կազմակերպուեցաւ նաեւ շարադրական մրցում մը: Շարադրութեան նիւթը նշուած թատերախաղն էր: Մասնակցողները պէտք էր հետեւէին պատրաստուած բացատրականին:



Համազգայինի «Նայիրի» Պարախումբի Տարեկան Ցառող Ելոյթը

«Հայկական Պարը Մեր Քաղաքակրթութեան Լաւագոյն Ապացոյցն Է». Գագիկ Գինոսեան Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Սան Ֆերնանտո Հովիտի «Պարոյր Սեւակ» մասնաճիւղի նախաձեռնութեամբ, Փետրուար 4, 2017ին, երեկոյեան ժամը 7ին, Քալիֆորնիոյ Նահանգային համալսարանի Նորթ-րիճի մասնաճիւղի (CSUN) «Plaza Del Sol» սրահին մէջ տեղի ունեցաւ «Նայիրի» պարարուեստի դպրոցի տարեկան ելոյթը:



Վիզէն Չալտրանեանի «Լռութիւն» Ֆիլմաշարքի Փառատօն Համազգայինի Կազմակերպութեամբ

Հովանաւորութեամբ Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութեան, տեղի ունեցաւ տաղանդաւոր արուեստագէտ Վիզէն Չալտրանեանի «Լռութիւն» ֆիլմաշարքի փառատօնը՝ Կլենտլիի «MGN» շարժապատկերի սրահին մէջ, Փետրուար 20էն 24:

Համազգային Սարեան Արուեստի Միաւորը

Այս շրջանին ունեցաւ երեք տարբեր ցուցահանդէսներ՝ կայացած հայ նկարիչներու մասնակցութեամբ խմբային ցուցահանդէս, աշակերտական խմբային ցուցահանդէս, եւ Արմէն Մեշէֆեճեանի անհատական ցուցահանդէսը:





Համազգայինի Թատերական Միաւորը Կը Ներկայացնէ «Օտղկամանի Գաղտնիքը»
 Վերջին չորս տարիներուն ընթացքին, թատերական յաջող ծրագիրներ իրագործելէ ետք, Համազգայինի Շրջանային վարչութիւնը ստեղծեց Համազգայինի Թատերական միաւորը:

Միաւորը կը կազմակերպէ թատերական աշխատադասեր նոր դերասաններ պատրաստելու համար, եւ բեմ կը բարձրացնէ այլազան թատերգութիւններ, ներառեալ մանկապատանեկան:



Համազգայինի Թատերական Միաւորը Կը Ներկայացնէ Հարիւրամեայ Ժագ Յակոբեանի «Կռունկը Կը Կանչէ» Թատերախաղը, Յուլակ Խաչերեանի բեմադրութեամբ:
 2017-ի Նոյեմբեր ամսուան ընթացքին Համազգայինի խումբը չորս անգամ բեմ բարձրացաւ: Յատուկ էլոյթ ունեցաւ նաեւ հայկական երկրորդական վարժարաններու աշակերտներուն համար:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ
Hamazkayin Theater Company
Theater Workshop



Led by Vaneh Assadourian, a graduate of UCLA's School of Theater, Film and Television with specializations in Directing and Acting and experiences in Stage Management.

"What makes art beautiful is the danger, and there is always the danger of falling"

Classes start on Monday, April 18th at 7:30 pm for 8 weeks
 Ages 16+ • \$90/person

Workshop will be conducted mostly in English.

Black comfortable attire and open attitude is required.

Location: 407 E Colorado St. Glendale, CA 91205

Email: call us for any questions
 Hamazkayintheatercompany@yahoo.com 626-437-8707






**Համազգայինի «Արեւ»
Պարախումբն Ու
Տաղանդաւոր Փոքրիկները
Հմայեցին Ներկաները**
Ման Ֆերնանտո Հովիտի
հիւսիսային շրջանի
Համազգայինի «Լեւոն Շանթ»
մասնաճիւղը այդ
ընտանիքին ամէնէն
երիտասարդ անդամն է:
Անիկա շուրջ տարի մը առաջ

ծնունդ առած է եւ շնորհիւ իր վարչութեան անդամուիիներուն անսակարկ ճիգերուն ու մանաւանդ հրապարակային զանազան ձեռնարկներուն՝ արդէն իսկ դարձած է աչքառու եւ քաջածանօթ, ամբողջ շրջանէն ներս:




**Համազգայինի Ման Ֆրանսիսքոյի Նիկոլ Աղբալեան Մասնաճիւղի
«Արագ» Պարախումբի ելոյթը Հայաստանի Անկախութեան 100-ամեակի առիթով,
Անի Այանեանի ղեկավարութեամբ:**



**Համազգայինի Օրէնճ
Քաունթիի
Սիամանթօ
Մասնաճիւղի
Մանկապատանեկան
«Երագ» Պարախումբի
ելոյթը**



Համագգայինի Շրջանային վարչութեան անդամներ հանդիպում ունեցան
 Հայաստանի Սփիւքի նախարար Մխիթար Հայրապետեանի հետ, Յուլիսին իր Լոս Անճելըս այցելութեան առիթով:



Համագգայինը Կը Թողարկէ Մանկական Ձեռագիրի «ԱՐԴԻ» Տառատեսակը

Համագգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Կեդրոնական վարչութիւնը այսու կու գայ հայ գրասէր հանրութեան եւ հայերէնի ուսուցման մարզին մէջ մասնագէտներու ուշադրութեան յանձնելու.....




Համագգայինի Երիտասարդական Ցանցի Անմոռանալի Հաւաքը Քեպէքի Մէջ
 Տպաւորութիւններ - «Ուրախ եմ, որ հնարաւորութիւնը ունեցայ հանդիպելու ստեղծագործ հայերու հետ».....

ԳՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
հեղինակին կողմէ

BOOK PRESENTATION
by the author

ԲՃ. ԿԱՐԴԻՍ ՀԱՐՈՑԵԱՆ

Dr. GARBIS HARBOYAN




The Odyssey of Armenian
Physicians, Dentists, and
Pharmacists during the
Armenian Genocide

MAY 30
2018
7:00 PM

Armenian Youth Center
211 W. Chestnut St.
Glendale, CA 91204

Համազգայինի Գրական Միաւորը ներկայացուց Տօքթ. Կարպիս Հարպոյեանի նոր գիրքը՝


Հայ Բժիշկներուն,
Ատամաբուժներուն Եւ Դեղագործներուն
Ողիսականը Հայկական Ցեղասպանութեան
Ընթացքին:





Համազգայինի Կլէնտլի Յովհաննէս Թումանեան Մասնաճիւղը ներկայացուց գրական եւ թատերական ձեռնարկներ:

Մարտ 28, 2018-ին, Երեւանի Յովհաննէս Թումանեանի տուն-թանգարանի տնօրէնուհի՝ Նարինէ Թուխիկեան-Խաչատրեանը, տեսասահիկներու ցուցադրութեամբ հանգամանօրէն անդրադարձաւ արեւմտահայ երկու տիտաններու՝ Յակոբ Պարոնեանի եւ Գրիգոր Զօհրապի կեանքին եւ գրական ժառանգութեանը: Յունուար 28, 2018ին տեղի ունեցաւ Խրիմեան Հայրիկին նուիրուած շքեղ ձեռնարկ մը՝ Նիւ Եօքթէն հրաւիրուած հանրայայտ մտաւորական, թատերագետ եւ դերասանապետ՝ Տօքթ. Հրանդ

Մարգարեանի բարձրարժէք եւ բացառիկ մեկնաբանութեամբ եւ մենակատարութեամբ: 2017-ի Հոկտեմբերի 14-ին տեղի ունեցաւ «Մաշտոցէն Սեւակ» բնաբանով Հայ Մշակոյթի օրուան նուիրուած երեկոն, որուն մասնակցեցան Ամերիկա ծնած, իրենց հայեցի դաստիարակութիւնը մեր Ազգային վարժարաններու մէջ դարբնած եւ Համազգայինի Կլէնտլի մասնաճիւղի երիտասարդ նորագիր անդամները:





Պատմական կրթագրութեան նշանակալից արձանագրութեան ժամանակահատվածում հայտնաբերված և հրատարակված գրքերից մեկը՝ «Հայկական Գրական Միաւորի Գրական Միաւորը»-ի նորագիր ձեռնարկները:

Երբեք նախկինում
Լրացուցիչ, նախապատրաստված եւ մեկնաբանված գրքերի
ճանաչմանը թրջանակները ստեղծողները:

ՆԱԽԷ ԹՈՒՆՈՒՄԱՆ-ՄԱՍՏՐԵԱՆ




Յուզիկով, ժողովրդավար, Մարտ 28, 2018-ի կրթական ժամը 7:00 րոպե

Գրքերը եւ Մատչելի Մատչելի Մատչելի եւ Երկրաբանական Մատչելի
միջոցները Մատչելի Մատչելի եւ Մատչելի միջ
211 W. Chestnut Street, Glendale, California 91204

Համազգայինի Գրական Միաւորը շնկտեմբեր 2017ին, Կլենտլի կեդրոնական գրադարանին մէջ ներկայացուց Հրայր Անմահունիի պատրաստած վաւերագրական ֆիլմը Վահէ Օշականի մասին:

Բանախօսներ՝ UCLA ի դասախօսներ՝ Փրոֆ. Փիթըր Գաուի, (Peter Cowe is a Narekatsi Professor of Armenian Studies at UCLA)

Տոքթ. Յակոբ Կիւլլիւճեան. նաս Փրոֆ. Թալին Ոսկերիչեան:



OIA & HAMAZKAYIN PRESENT

Sibil In LA

A Red Carpet-Black Tie Optional Event

Renowned Armenian Singer from Istanbul
Sibil

Guest Singer from Armenia
Andre

Hamazkayin & Lilia Markarian Dance Group

Alex Pilibos School Choir

October 22, 2017 Sunday 5:30pm
@ Wilshire Ebell Theatre
4401 W 8th St. Los Angeles, CA 90005
Ticket Prices: \$40 - \$100
For Tickets Check out Facebook page: "Sibil Concert in LA" or text
Nurhan: (818) 486-6676 * Talin: (213) 379-6317
Vania: (818) 216-9935 * Lucy: (818) 585-3207

Համազգայինի Երջանային Վարչութիւնն ու Պոլսահայ միութիւնը, ուրախութեամբ

ներկայացուցին Պոլիսէն հայ երգչուհի Սիպիլը: Համերգին մասնակցեցաւ նաեւ Անտրէն, Կիրակի 22 Նոյտ.ին, յետմիջօրէին ժամը 5:30-ին, Wilshire Ebell համերգասրահէն ներս:



Համազգայինի Աւանդոյթներու Միաւորը հաճելի ու մտերմիկ մթնոլորտի մը մէջ ներկայացուց տոհմիկ տարազներու ցուցադրութիւն: Փոքրիկները տողանցեցին, արտասանեցին ու պարեցին հայկական տարազներով: Իրենց միացաւ փոքրերու երգչուհի ՄԱԿԻ:




Համազգայինի Երաժշտական Միաւորը այս շրջանին տարաւ երկու վիթխարի արխիւային աշխատանք:

Բարսեղ Կանաչեանի գործերը ամբողջութեամբ ներկայացուեցան թուայնացուեցան, թարգմանուեցան, ուսումնասիրուեցան եւ հրամցուեցան հանրութեան: Սփիւռքահայ երաժիշտներու երգերէն 49 հատ արձանագրուեցան, կատարողութեամբ բացառիկ մեկնաբան մեցցո-սոփրանօ Աննա Մայիլեանի:



Համազգայինի Ֆրեզնօյի Դանիէլ Վարուժան Մասնաճիւղը

Երկարամեայ կեանք ունի եւ կը փորձէ իր կարելին ընել մշակութային աշխատանք տանելու համար: 2018-ի Օգոստոս ամսուն, Շրջանային Վարչութենէն խումբ մը անդամներ Ֆրեզնօ այցելելով ունեցան յատուկ հանդիպում, որու ընթացքին կազմուեցաւ նոր վարչութիւն մը նոր հեռանկարներով:



Համազգայինի Արդի Միաւորը

երիտասարդական խումբ մըն է, որուն նպատակն է զանազան ձեռնարկներու միջոցաւ քով քովի բերել հայ երիտասարդները, հաճելի եւ ընկերային մթնոլորտի մը մէջ, ծանօթանալու եւ վայելելու արուեստ եւ մշակոյթ հայ արուեստագէտներու մասնակցութեամբ: Տարիներու դադարէ ետք, միաւորը վերակազմուեցաւ եւ իր առաջին հաւաքոյթը տեղի կ'ունենայ Սեպտեմբեր 21, 2018ին:



Համազգայինի Յառաջիկայ Ձեռնարկներու Օրացոյց

- **Սեպտեմբեր 21, 2018** - Ուրբաթ երեկոյեան ժամը 7:00-էն սկսեալ: "Artee Mixer" - «Արդի» Միաւորի կազմակերպութեամբ Երիտասարդական հաւաք: Վայր՝ Underdogs, 156 South Brand Blvd., Glendale: Մուտքը ազատ: Նկարներու ցուցահանդէս եւ երաժշտութիւն:
- **Սեպտեմբեր 22, 2018** - Շաբաթ երեկոյեան ժամը 8:00-ին, Համազգայինի Սան Ֆրանսիսքոյի Նիկոլ Աղբալեան մասնաճիւղի կազմակերպութեամբ 90-ամեակի տօնակատարութիւն: Khachaturian Armenian Community Center, Saroyan Hall, 825 Brotherhood Way, San Francisco.
- **Հոկտեմբեր 5, 2018** - Ուրբաթ երեկոյեան ժամը 7:30-ին: «Արդի» Միաւորի կազմակերպութեամբ, «Ծառերը Հայաստանի մէջ» նիւթին նուիրուած երեկոյ: Ներկայացում՝ Armenian Tree Project-ի կողմէ, ապա ծառերու հետ կապուած հայկական ասանդոյթներու մասին տեղեկութիւններ եւ ծառերու նուիրուած երգ-երաժշտութիւն: Համազգայինի Փոքր Սրահ, 407 East Colorado Blvd., Glendale: Մուտքը ազատ:
- **Հոկտեմբեր 6, 2018** - Շաբաթ երեկոյեան ժամը 6:30-ին: Պարոյր Սեւակ մասնաճիւղի Նայիրի պարախումբի տարեկան ելոյթ: CSUN Plaza Del Sol Theatre, 18111 Nordhoff St., Northridge: Մուտքի նուէր՝ \$35: Հեռախօս՝ (818) 642-3187:
- **Հոկտեմբեր 21, 2018** (Date to be confirmed)- Կիրակի կէսօրէ ետք ժամը 5:00-ին, Թատերական Միաւորը կը ներկայացնէ Կատարողական Արուեստի Երեկոյ - երգ, երաժշտութիւն եւ թատերական պատկերներ: Caffe Gallery Backstage in Pasadena:
- **Նոյեմբեր 3, 2018** - Շաբաթ երեկոյեան ժամը 7:00-էն սկսեալ: Համազգայինի 90 եւ 50 -ամեակներու Կալա-Ճաշկերոյթ: Glendale Hilton: Յատուկ գեղարուեստական յայտագիր:
- **Նոյեմբեր 9, 2018** - Ուրբաթ երեկոյեան ժամը 7:00-ին: Կազմակերպութեամբ Համազգայինի եւ մասնակցութեամբ Ասպարեզի եւ այլ մշակութային միութիւններու, Յոբելեանական Երեկոյ՝ նուիրուած Վեհանոյշ Թեքեանի գրական գործունէութեան, իր 70-ամեակին առիթով: Glendale Downtown Central Library, 222 E Harvard Street: Մուտքը ազատ:
- **Նոյեմբեր 16, 2018** - Ուրբաթ երեկոյեան ժամը 7:00-ին: Աւանդոյթներու Միաւորի եւ Ասպարեզի կազմակերպութեամբ՝ «Համշէնը Անցեալի եւ Ներկայի Խաչմերուկներում» վաւերագրական Ֆիլմի ցուցադրութիւն, հեղինակի՝ Լուսինէ Սահակեանի ներկայութեամբ: Glendale Downtown Central Library, 222 E Harvard Street: Մուտքի նուէր \$20:
- **Դեկտեմբեր 1, 2018** - Շաբաթ, երեկոյեան ժամը 7:00-էն սկսեալ: "Artee Mixer-Concert" - «Արդի» Միաւորը կը ներկայացնէ Հայ երիտասարդ կայացած երաժիշտներ իրենց նուագախումբերով՝ Արդեմ Մանուկեան, Անդրանիկ Գզիրեան եւ Վահագն Թուրկութեան: LATC, The Los Angeles Theatre Center, 514 S Spring St, Los Angeles: Մուտքի նուէր \$40:
- **Դեկտեմբեր 16, 2018** - Կիրակի երեկոյեան ժամը 6:00-ին: Համազգայինի 90 եւ 50 -ամեակներու Տօնակատարութիւն: Glendale High School Auditorium, John Wayne Performing Arts Center, 1440 E Broadway, Glendale, երեկոյեան ժամը 6:00-ին: Կը մասնակցին Համազգայինի արուեստի խումբերը: Մուտքը ազատ:
- **Փետրուար, 2019** - Մանկապատանեկան ներկայացումներ Թատերական Միաւորին կողմէ: Մանրամասնութիւնները շուտով:
- **Մարտ 2, 2019** - Շաբաթ, երեկոյեան ժամը 7:00-էն սկսեալ: Բարեկենդանի Ճաշկերոյթ Դիմակահանդէս - "Paregentan" Masquerade Ball, կազմակերպութեամբ Համազգայինի Աւանդոյթներու Միաւորին: Taghlian Hall: Յաւելեալ տեղեկութիւնները շուտով:



Համազգայինի Մասնաճիղերը
Hamazkayin USA Western Region
Chapters

-
- 1
 Orange County Chapter
 «Միամանթո» Օրենձ Քաունթի
- 2
 Glendale Chapter
 «Յովհաննէս Թումանեան» Կլէնտէյլ
- 3
 Pasadena Chapter
 «Շահան Շահնուր» Փասատինա
- 4
 West Valley Chapter
 «Պարոյր Սեւակ»
 Արեւմտեան Հովիտ
- 5
 East Valley Chapter
 «Լեւոն Շանթ»
 Արեւելեան Հովիտ
- 6
 Fresno Chapter
 «Դանիէլ Վարուժան» Ֆրեզնո
- 7
 San Francisco Chapter
 «Նիկոլ Աղբալեան»
 Սան Ֆրանսիսքո



Համազգայինի Միաւորները
Hamazkayin USA Western Region
Groups/Units

-
- 1
 Literary Committee
 Գրական Միաւոր
- 2
 Music Committee
 Երաժշտական Միաւոր
- 3
 Heritage Committee
 Աւանդոյթներու Միաւոր
- 4
 Theater Company
 Թատերական Միաւոր
- 5
 Sarian Arts Committee
 Սարեան Կերպարուեստի Միաւոր
- 6
 Artee Youth Society
 Արդի Երիտասարդական Միաւոր
- 7
 Ani Dance Company
 Անի Պարախումբ
- 8
 Sayat Nova Choir
 Սայաթ Նովա Երգչախումբ



Համազգայինի Արևմտեան Ամերիկայի Երջանային վարչութիւնը կազմակերպեց անդամական զեկուցական-խորհրդակցական ժողով մը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 2018 Օգոստոս 18ին, առաւօտեան ժամը 10էն սկսեալ, Համազգայինի Կլէնտէլի կեդրոնին մէջ:
Նպատակը՝ միշտ նոյնը՝ Վառ Պահենք Մեր Մշակոյթը:

**Այս բոլորը միայն բաժին մըն են մեր մէկ ու կէս տարուան աշխատանքներէն:
Դժուար է ճամբան:
Միացէ՛ք եւ օժանդակեցէ՛ք մեզի
որ միասնաբար մեր մշակոյթը տանինք դէպի նոր ծաղկունքներ:**



Tel: (661) 927-7875 Email: hamazkayinwr@gmail.com